ICHD

«Այ Սի Էյչ Դի»
Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն

"ICHD" International Center
for Human Development

13.09.2016
ՊԱ-09-095

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Կապանի քաղաքապետ
պարոն Աշոտ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

«Այ Սի Էյչ Դի» Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՍՊԸ-ն և ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտը Համաշխարհային առողջապահական կազմակերպության աջակցությամբ և ՀՀ առողջապահության նախարարության անմիջական օժանդակությամբ մեկնարկել են **«Ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների համաճարակաբանական հսկողության STEPS»** համազգային հետազոտությունը: Այն Հայաստանում իրականացվում է առաջին անգամ և նպատակ է հետապնդում՝

- ընտրանքային հետազոտության միջոցով հավաքագրել տվյալներ, որոնք անհրաժեշտ են գնահատելու Հայաստանի Հանրապետության 18-69 տարեկան բնակչության շրջանում ՈՎՀ-ի զարգացման ռիսկի գործոնների տարածվածության մակարդակն ըստ սեռատարիքային խմբերի և բնակավայրերի,
- վերահսկել ՈՎՀ-ի ռիսկի գործոնների աճի և ուղղվածության միտումները,
- մշակել ՈՎՀ-ի կանխարգելմանն ու վերահսկմանն ուղղված քաղաքականություն, իրականացնել բարեփոխումներ, պլանավորել նախատեսվող միջոցառումները և կատարել գնահատում՝ որը հիմնավորված է կատարված հետազոտության տվյալներով,
- իրականացնել ՈՎՀ-ի զարգացման կանխարգելման միջոցառումներ,
- կանխատեսել բժշկական ծառայությունների պահանջարկը:

Հետազոտության դաշտային աշխատանքները (տնային տնտեսություններում հարցումների կազմակերպումը) իրականացվում է «Այ Սի Էյչ Դի» Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՍՊԸ կողմից երեք փուլերով:

ՓՈՒԼ 1 – իրականացվում է մասնակցի հարցազրույց՝ գնահատելու համար վերջինիս մոտ վարքագծային ռիսկի և առողջական վիճակի պատմությունը՝ կապված ՈՎՀ-ի հետ:

ՓՈՒԼ 2 – ներառում է մարդաբանական և գործիքային չափումները, գնահատելու համար՝

Հ.Հ. Սյունիքի մարզ
ԿԱՊԱՆԻ ... ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՓՍՏԱԹՈՒՂԹ
ՍՏԱՑՎԱԾ է 16.09.16 թ.
Մուտք № 2557 Գրք. №

1) զարկերակային ճնշումը,

2) հասակը, քաշը, գոտկատեղի և կոնքի շրջագիծը:

ՓՈՒԼ 3 – ներառում է լաբորատոր չափումներ՝ բիոքիմիական գործոնների որոշման համար՝

1) գլյուկոզի և ընդհանուր քոլեստերինի, բարձր խտության լիպոպրոտեիդների պարունակությունը մազանոթային արյան մեջ, կիրառելով «չոր» քիմիական հետազոտության մեթոդը,

2) չափահաս բնակչության կողմից աղի օգտագործման միջին քանակը, ուսումնասիրելով նատրիումի պարունակությունը վերցված մեզում:

Հետազոտության շրջանակներում, ինչպես մարդաբանական այնպես էլ բիոքիմիական չափումներն իրականացվում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից տրամադրված բարձրորակ սարքավորման միջոցով, համապատասխան ուսուցում անցած փորձառու անձնակազմի կողմից՝ անվտանգության անհրաժեշտ նորմերի պահպանմամբ:

Սույնով հայցում ենք Ձեր օժանդակությունը համայնքում հետազոտական աշխատանքներին՝ խնդրելով տեղյակ պահել և հորդորել համայնքի անդամներին մասնակցել ինչպես հարցումներին, այնպես էլ մարդաբանական ու բիոքիմիական չափումներին:

Վստահ ենք, որ ազգային մակարդակում ՈՎՀ-ի ռիսկի գործոնների տարածվածության վերաբերյալ հստակ տվյալների առկայությունը թույլ կտա ՀՀ կառավարությանն իրականացնել ՈՎՀ-ի կանխարգելմանն ու վերահսկմանն ուղղված միջոցառումների հիմնավորված պլանավորում՝ նպաստելով ՀՀ քաղաքացու առողջության պահպանման մակարդակի բարձրացմանն ու բարելավմանը:

Հետազոտության հետ կապված հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք կապ հաստատել հետազոտության դաշտային աշխատանքների համակարգող պարոն Արտակ Սաղաթելյանին՝ 095005315 հեռախոսահամարով:

Կանխավ շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

Պարույր Ամիրջանյան

Տնօրեն